



ՅՈՒ. Ա. ԹԱՄԱՆՅԱՆ

(Ծարտարապետ)

ՄԱՐՄԱՇԵՆԻ ՎԱՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

Հուշարձանախումբը գտնվում է ներկայիս Վահրամաքերոյ գյուղից մոտ երկու կիլոմետր հարավ, Ախուրյան գետի ձորում, ձախ ափի բարձրադիր հարթակի վրա: Ծըր-ջապատը չափազանց հարուստ է նյութա-կան մշակույթի մնացորդներով: Այդ ժա-ղից հարավ, ձորի մեջ, պահպանվել են ե-կեղեցու մնացորդներ, քանդակագործ և արտֆիլավոր բեկորներով: Պահպանվել են նաև Վահրամ Պահլավունու կողմից կա-ռուցված Վահրամաքերոյի մնացորդները, ո-րոնք, անշուշտ, կարոտ են պեղման և ու-սումնասիրման:

Մարմաշենի հուշարձանախումբը (գծ. № 1) պատմական ճարտարապետական բացառիկ նշանակություն ունեցող համա-կառույց է: Նրա գլխավոր եկեղեցին կառու-ցել է Վահրամ Պահլավունի իշխանը՝ 988—1029 թվականներին:

Հայ պատմական ճարտարապետության խոշորագույն գիտակ Թ. Թորամանյանը մանրամասն ուսումնասիրել է հուշարձա-նախումբը և գտել, որ շուրջ 40 տարին, որի մասին հիշատակում է մեծ եկեղեցու հա-րավային սլափի արձանագրությունը, տա-ճարի համար շատ երկար ժամանակամիջոց

է, հետևաբար աշխատանքները կատարվել են ընդհատումներով¹: Նույն կարծիքին է նաև Ն. Մ. Տոկարսկին, ըստ որի այդ ժա-մանակաշրջանը, հավանաբար, վերաբերում է ողջ հուշարձանախմբի կառուցմանը²:


Հ. Ա. Օրբելին, նշելով հուշարձանախմբի գլխավոր եկեղեցու կառուցման տարեթիվը, նշում է, որ հյուսիսային սլափի վրա գրված արձանագրության համաձայն, եկեղեցին վերստին նորոգվել է 1225 թվականին: Վեր-ջին նորոգությունը նա վերագրում է 19-րդ դարի վերջերին³: Ս. Խ. Մնացականյանը այն կարծիքին է, որ Մարմաշենի մեծ եկե-ղեցին իր ընդհանուր ձևերով մոտենում է Անիի Մայր տաճարին, հատկապես ճա-կատների հարդարանքով⁴: Մարմաշենի մեծ

¹ Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտա-րապետության պատմության, Բ. 2, Երևան, 1948, էջ 238:

² Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, стр. 219.

³ И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, стр. 440.

⁴ Ակնարկ հայ ճարտարապետական պատմության, Երևան, 1964, էջ 205:



Գծ. № 1. Մարմաշենի վանքի գլխավոր հատակագիծը

Լ. Լեդեգին իր հատակագծային ձևերով առնչվում է նաև դեռ 6—7 դարերից եկող Պտղմու և Արուհի տաճարներին, այսպես կոչված, գմբեթավոր սրահների հետ, ապա որոշակի նմանություն ունի Բջնիի Աստվածածին և, վերջապես, Ամբերդի եկեղեցու

ստեղծվում է կամրջակ, որը հնարավորություն է ընձեռում պարզելու հուշարձանների կապը և փոխազդեցությունները:

Այս կառուցվածքների ստեղծման ժամանակը առնչվում է հայ նշանավոր ճարտարապետ Տրդատի ստեղծագործման ժամանակաշրջանին: Մարմաշենի գլխավոր եկեղեցու ճարտարապետական վերլուծությունը, նրա կատարյալ ձևերը, համաչափությունները թույլ են տալիս ենթադրելու, որ հանճարեղ ճարտարապետը եթե ոչ ուղղակի կերպով, համեմայն դեպս որոշակի մասնակցություն է ունեցել տաճարի կառուցմանը: Մանավանդ Մարմաշենը իր աշխարհագրական դիրքով հեռու չի Բագրատունի մայրաքաղաք Անիից և Արգինայից, որ ստույգ գործել է մեծ վարպետը: Գուցե նրա ստեղծած դպրոցի ազդեցության ներքո է կառուցվել այդ եկեղեցին:

Գլխավոր եկեղեցու վրա, հավանական է 19-րդ դարի վերջին, կատարվել են վերանորոգման աշխատանքներ, որոնց ժամանակ, նույնիսկ քարը տաշելիս, օգտագործել են տարբերիչ տաշվածք՝ սանդր դարսդի հետքերով: Սակայն այդ վերանորոգումը չի կարելի համարել հաջողված գործ:


1954 թվականին հուշարձանի վիճակը բավականին բարվոք էր, և ոչ մի վնասվածքի հետք չէր կրում: Այդ ժամանակ ամրացվել է հյուսիսային ճակատի որմնախարիսխը և հարավ-արևմտյան անկյունում նոր



Նկ. № 1. Մարմաշենի երկրորդ եկեղեցին վերանորոգումից առաջ

հետ: Ինչպես նշում է Ն. Տոկարսկին, շատ հավանական է, որ վերջինս նույն ճարտարապետի ստեղծագործությունն է հանդիսանում: Այսպիսով այս կառուցվածքների միջև

5 Н. М. Токарский, 'Նշված աշխ., էջ 222:



Գծ. № 2. Մարմաշենի երկրորդ եկեղեցու վերանորոգման նախագիծ

տաշվել և տեղադրվել որմնախարիսխի անկյունաքարը:

Գլխավոր եկեղեցուց հյուսիս կառուցվել է երկրորդ եկեղեցին, որը մեղ միջանցքով անջատվում է նրանից: Իրանց միջև գոյություն ունի հատակագծային որոշակի ընդհանրություն, չնայած չափերի տարբերությանը:

Թ. Թորամանյանը այս եկեղեցին համարում է ավելի հին, սակայն չի հիմնավորում իր կարծիքը⁶:

Հ. Օրբելին այն վերագրում է 13-րդ դարում գլխավոր եկեղեցու վերակառուցման ժամանակին⁷: Ն. Մ. Տոկարսկին գտնում է, որ եկեղեցին կառուցված է եղել 11-րդ դարի առաջին կեսին, հավանաբար մեծ եկեղեցուց անմիջապես հետո⁸: Նրա կարծիքով փոքր եկեղեցու կլոր թմբուկը սկզբնական չի կարող լինել և հետագա վերակառուցման արդյունք է: Սակայն վերանորոգման աշխատանքները


⁶ Թ. Թորամանյան, Նշված աշխ., էջ 238:

⁷ Հ. Օրբելի, Նույն տեղում:

⁸ Н. М. Токарский, Нույն տեղում, էջ 219:

տանքների ընթացքում մեր ստուգումները համոզեցին, որ թմբուկը վերակառուցման չի ենթարկվել:

Մինչև վերանորոգման աշխատանքների սկիզբը եկեղեցին ծածկված էր փլատակներով և գտնվում էր կիսավեր վիճակում: Կանգուն էր մնացել հուշարձանի հարավ-արևելյան կեսը: Քանդված մասի բեկորները



Նկ. № 2. Մարմաշենի երկրորդ եկեղեցին վերանորոգումից հետո



Նկ. № 3. Մարմաշենի երկրորդ եկեղեցին վերանորոգումից հետո



թափված էին հուշարձանի ներսում և շրջապատում (գծ. № 2 և № 3):

Վերանորոգման աշխատանքները սկսվեցին հուշարձանի մաքրումից, որի ընթացքում ի հայտ եկան բազմաթիվ պիտանի հարթ երեսապատի քարեր, քանդակազարդ բեկորներ: Վերակազմության նախագծով⁹ նախատեսվում էր վերանորոգել հարավա-

⁹ Ճարտարապետներ Ծ. Ազատյանի և Յու. Թամանյանի՝ 1954 թ. կատարված չափագրության հիման վրա նախագիծը կազմեց տողերիս հեղինակը:

յին, արևելյան և մասամբ հյուսիսային ճակատների տանիքները և կատարել թմբուկի պահպանված մասի կոնսերվացիա, նոր քարով լրացնելով պակասող մասերը:

Մաքրումից հետո¹⁰ բացվեց ամբողջ հյուսիսային ճակատը (նկ. № 1) և ի հայտ եկան եռանկյունի խորշերը: Հյուսիսային ճակատի արևելյան կողմի խորշի կամարադեղի ամրացումը պահանջեց մեծ վարպետություն, ուր ջարդված կամարադեղը մետաղյա ամրացուցիչների և բետոնի շնորհիվ ստա-



Գծ. № 3. Մարմաշենի երկրորդ եկեղեցու վերանորոգման նախագիծ

ցավ համապատասխան կաշտություն¹¹ (նկ. № 2):

Արևելյան ճակատի վերակառուցման ժամանակ փորձեցինք տեղադրել փլատակների տակից դուրս եկած քարի եզրագիծ ունեցող պատուհանի երեսակալի մեծածավալ քա-

¹⁰ Մաքրման աշխատանքները կատարվել են 1954—55 թվականներին Հ. Եղիազարյանի և Ա. Ծաֆինյանի ղեկավարությամբ:

¹¹ Աշխատանքները կատարում էր Յ. Սարգսյանի քարտաշ-որմնադիրների քրիզաղը՝ տվյալի Հ. Գապարյանի ղեկավարությամբ և տողերիս հեղինակի նկողության ներքո:



Նկ. № 4. Մարմաշենի երկրորդ եկեղեցին
վերանորոգումից հետո

րը: Սակայն այդ քարը իր չափերով և պատուհանի բացվածքով չէր համապատասխանում պահպանված մասերին: Կարելի է ենթադրել, որ կառուցելիս տաշել են այդ քարը, սակայն անհամապատասխան լինելու պատճառով թողել են տեղում՝ առանց տեղադրելու պատի վրա: Դրանում համոզվեցինք նաև այն պատճառով, որ դրան համապատասխանող երկրորդ՝ վերևի քարը լրիվ բացակայում էր, և փլատակները մաքրելիս չգտնվեցին ոչ միայն լրիվ, այլև ջարդված բեկորների կտորներ: Նշված հանգամանքը ամրապնդեց այն համոզմունքը, որ արևելյան պատի տակ, գերեզմանի վրա, տեղադրված երեսակալը հուշարձանի արեւելյան պատուհանի համար չի պատրաստվել: Շատ հավանական է, որ այն տաշվել է հյուսիսային ճակատի կամ նույնիսկ արեւմտյան ճակատի պատուհանի համար: Գուցե, ինչպես նշեցինք, սխալ է տաշվել և չի օգտագործվել:

1956—57 թվականների վերանորոգման աշխատանքների ժամանակ պատուհանի բացվածքի չափը որոշվեց ներսում պահպանված պատուհանի թեքության համաձայն և երեսապատվեց հարթ տաշված քարերով, առանց երեսակալի: Ցավոք, հյուսիսային և արևմտյան ճակատներից պահպանվել էր միայն ստորին մեկ շարքը, և հնարավոր չէր պարզել այդ ճակատներին

ժամանակին եղած պատուհանների և երեսակալների եզրագիծն ու չափը:

Լուրջ դժվարություններ առաջացան հարավ-արևմտյան ցածր լանջի ծածկը իրականացնելու ժամանակ: Եկեղեցու այդ մասում պահպանվել էր միայն մի կամարը, որը պետք է կրեր միայն ծածկի քեղը և ամուր հենարան հանդիսանար այդ մասում քարձրացվող կոպիտ տաշված քարերից կառուցված պատի համար, որի նպատակն էր եզրել ծածկի տակ տեղավորվող բետոնյա լիցքը (Նկ. № 3):

Գլխավոր եկեղեցուց հարավ, մի փոքր շեղ դիրքով, կառուցված է երրորդ եկեղեցին, որի կառուցման տարեթիվը նույնպես հայտնի չէ:

Թ. Թորամանյանը համարում է այն 13-րդ դարի գործ¹², Ն. Մ. Տոկարսկին՝ 10-րդ դարի կառուցվածք¹³:

Ընդունված էր համարվում, որ արևմտյան երկհարկանի խորանները առաջ են եկել 13-րդ դարում: Սակայն Սանահինի Աստվածածին և Ամենափրկիչ եկեղեցիները 10-րդ դարի, իսկ Ամբերդի եկեղեցին 11-րդ դարի գործ են և ունեն արևմտյան երկհարկանի խորաններ: Այնպես որ, շատ հավանական է, արևմտյան մասում ավանդատներ ունեցող այդ եկեղեցին կառուցված լինի նույնպես 11-րդ դարում:

Գմբեթավոր փոքր եկեղեցի է, արտաքուստ՝ ուղղանկյունի, ներսից՝ խաչաձև հատակագծով, որ ստեղծում են անկյուններում դասավորված ավանդատները:

Խաչաթևերի միացման անկյուններում ձգվող գլանաձև բարակ կիսապուրները, միանալով կամարներով, կրում են գմբեթը՝ կյոր թմբուկով և սրածայր վեղարով:

Հուշարձանը վերանորոգումից առաջ գտնվում էր բավական անմխիթար վիճակում: Թափվել էին տանիքի և վեղարի սալերի զգալի մասը, արևելյան ճակատի երեսապատի զգալի հատվածները, և հուշարձանը դատապարտված էր քայքայման ու ոչնչացման:

1950—51 թվականներին վերանորոգման համար այնտեղ սկսվեցին նախապատրաստական աշխատանքներ. կուտակվել էին տաշված քարեր և, միառժամանակ, դադարից հետո, 1954 թվականին կազմված վերանորոգման նախագծի հիման վրա¹⁴ (գծ. № 4), վերսկսվեցին աշխատանքները:

Սկզբում վերաշարվեցին և ամրացվեցին երեսապատների խարխված ու պոկված քա-


¹² Թ. Թորամանյան, Նշված աշխատությունը, էջ 137:

¹³ Н. М. Токаревский, Նույն տեղում, էջ 219:

¹⁴ Կազմվել է նախորդ նախագծի հեղինակությամբ:

րերը: Այս տեղադրվեցին նոր երեսապատման բարերը՝ տեղական կարմրագույն տուֆից: Պատերի, քիվերի վերանորոգումից հետո հնարավոր եղավ վերանորոգել վեղարի ծածկը, տեղադրելով սրածայր փակող

Գլխավոր եկեղեցուց արևմուտք գտնվում է կլոր եկեղեցին, որն իր հատակագծային ձևերով հար և նման է Գառնիի կլոր եկեղեցուն¹⁷: Այս շենքի կառուցման ժամանակը որոշելը կապված էր մեծ դժվարությունների



Գծ. № 3. Մարմաշենի երրորդ եկեղեցու վերանորոգման նախագիծ (1954 թ.)

բարը և տանիքների ծածկասալերը (նկ. № 4 և № 5):

Անհրաժեշտ է նշել, որ հնում կիրառված շաղախը ուներ չափազանց մեծ ամրություն և իր հատիկային կառուցվածքով խիստ տարբերվում էր մյուս հուշարձանների շաղախներից: Ինչպես երևում է, վարպետներին լավ հայտնի են եղել շաղախների հատիկավորման կազմի տվյալները, կապակցող նյութի և ջրի ավանդաբար սերնդից սերունդ անցնող համաչափությունները: Պատի բետոնի միջուկի մեջ պարզ զգացվում էր քարերի, դեռ Թ. Թորամանյանի կողմից շեշտված, հորիզոնական դասավորությունը և շաղախի մեջ մանր ավազի հետ մանր և խոշոր խճի օգտագործումը¹⁵:

Հուշարձանների վերանորոգումից հետո հարց առաջացավ կազմակերպել ջրերի հեռացումը, որը պակաս կարևոր չէ հուշարձանների կայունության ապահովման համար: Այդ կապակցությամբ մեծ ծավալով հողային աշխատանքներ կատարվեցին, հատկապես գլխավոր և երկրորդ եկեղեցիների արանքից և երկրորդ եկեղեցու հյուսիսային պատի տակ գոյացած խրամատից՝ անձրեվաջրերը հեռացնելու համար: Այդ աշխատանքները, մեր կարծիքով, հետո են բավարար լինելուց, և այժմ հասունացել է հուշարձանախմբի բարեկարգման և մաքրման հարցը¹⁶:



Նկ. № 5. Մարմաշենի երրորդ եկեղեցին վերանորոգումից հետո

¹⁵ Թ. Թորամանյան, Նյութեր, հատոր 1, էջ 139:

¹⁶ 1963 թ. սկզբին բարեկարգման աշխատանքները, սակայն մնացին անավարտ: Նախագիծը կազմվել է նախորդ նախագծի հեղինակությամբ:

¹⁷ Բ. Ն. Аракелян, Гарни, I, Ереван, 1951, стр. 69—70.

հետ: Նախ, եթե նա կառուցված լիներ 11-րդ դարում, ինչպես համարում է Տոկարսկին, ապա ինչո՞վ բացատրել նրա հատակի ցածր գտնվելը գլխավոր եկեղեցու և մյուս հուշարձանների հատակների համեմատ: Միաժամանակ կառուցված եկեղեցիների համար այդ կարգի տարբերությունը, այն էլ այդքան մոտ դասավորության դեպքում, համարյա անհնարին է: Աստիճանաբար որմնախարքսի վրա բարձրանում է շատ բարդ, կրկնվող տրամատավորված գոտին, որը ներքևից վեր ունի փոփոխական ելուստ: Այս գոտին հիշեցնում է Խժկոնքի ս. Սարգիս եկեղեցու գոտին, և դա էլ հիմք է ծառայել՝ այդ հուշարձանը 11-րդ դարի գործ համարելու:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարմաշենը հագեցված է տարբեր դարաշրջանների հուշարձաններով, և գոյություն

ունի 7-րդ դարի խաչածն հատակագծով հուշարձանը, կարելի է ենթադրել, որ այս հուշարձանը նույնպես 6—7-րդ դարերի գործ է:

Հիմնական հուշարձանախմբից հյուսիս, մի քանի հարյուր մետր հեռավորության վրա, պահպանվել են 7-րդ դարի խաչածն հատակագծով հուշարձանի հյուսիսային պատի և արևելյան աբսիդի մնացորդները: Ծուրջը տարածվում է ընդարձակ գերեզմանոցը:

Հուշարձանախմբից հարավ-արևմուտք, Ախուրյան գետի վրա, պահպանվել են հինավուրց կամրջի մնացորդներ: Այժմ, երբ հիմնական հուշարձանները սրդեն ամրացված են, անհրաժեշտ է ամրացնել գավթի և կլոր եկեղեցու պատերը: Այդ միջոցառումներով հնարավորին չափ կհարատևի հուշարձանախմբի կյանքը:

